

## Հայ գրականության մարզային փուլ - 2022 թ.

### Հարցաշարերի պատասխանները - 9-րդ դասարան

1. Ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդները, այնպես էլ հայերս, ունեցել ենք հին աստվածների մասին գրույցներ ու առասպելներ, որոնք պահպանվել են հայ միջնադարյան պատմիչների՝ Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Մեբեոսի, Հովհան Մամիկոնյանի պատմագրական աշխատություններում: Տարբեր աղբյուրներում պահպանված ու մեզ հասած գրույցներից մենք տեղեկանում ենք հայերիս հավատալիքներն ու բնության չար ու բարի ուժերն իմաստավորող աստվածների ու դյուցազունների մասին, որոնք էլ կազմում են մեր գրականության հնագույն շերտը: Հին հայերն, անշուշտ, ունեցել են իրենց զարգացած դիցաբանությունը, որն ավելի հին է, քան հունականը, որից օգտվել են աշխարհի բոլոր ժողովուրդները այն պարզ փաստարկով, որ մենք, ըստ հարկի (պետականություն և գիր ու գրականություն չունենալու պատճառով) աշխարհին չենք կարողացել ներկայացնել մեր անբավ հարստությունը: Ցավոք, այդ հին դիցաբանությունից շատ քիչ բան է պահպանվել ու հասել մեզ, այն էլ գլխավորապես Պատմահոր շնորհիվ: Որ մենք հնում ունեցել ենք մեր զարգացած դիցաբանությունը, հավաստում է հեթանոսական դիցարանի, աստվածների պաշտամունքի ու տաճարների առկայությունը: Հայոց հին աստվածների՝ Արամազդի, Անահիտի, Նանեի, Վանատուրի, Ամանորի, Գիսանեի և մյուսների մասին առասպելներ գրեթե չկան: Պահպանվել են Վահագնի և Աստղիկի մասին մի քանի գրույցներ: Մյուսների մասին գրույցները պահպանվել են ժողովրդի հիշողության մեջ և հասել մեզ: Հայոց դիցերի կացարանը եղել է բիրբլիական լեռան բարձունքում, որտեղ նստել է աստվածների հայր Արամազդը, որը համարժեք է հունական Զևսին, հռոմեական Յուպիտերին, պարսկական Ահուրամազդին: Նրան անվանել են «Մեծն ու արին Արամազդ»: Պաշտվում էր որպես երկնքի ու երկրի ստեղծող, լիություն ու պտղաբերություն պարգևող: Անահիտը՝ Արամազդի դուստրը, համարվել է պտղաբերության, արգասավորության, ծննդաբերության, ավելի վաղ շրջանում նաև ռազմի աստվածուհի: Նրան նվիրված տոնակատարությունը նշվում էր նավասարդի սկզբին. Անահիտին զոհաբերում էին առաջին բերքը, սպիտակաթույր սրբազան ցուլեր էին զոհաբերում: Նրա գլխավոր տաճարը գտնվում էր Եկեղյաց գավառի Երիզա ավանում: Այդ տաճարում կանգնեցված է եղել Անահիտի ոսկեձույլ արձանը, որը ջարդուփշուր են արել հռոմեացիները մ.թ. ա. 34 թվականին: Նրան մեծարել են Ոսկեծղին, Ոսկեմայր, սնուցող մայր և այլ պատվանուններով: Նույնացվել է հունական Արտեմիսի, հռոմեական Դիանայի հետ: XIX դարում հայտնաբերվել է Անահիտին վերագրվող մի պղնձաձույլ գլուխ, որը պահպանվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում: Աստղիկը՝ սիրո և գեղեցկության, ինչպես նաև երկնային լույսի (աստղ) աստվածուհին, անվանվել է «Ոսկեծղի», «Վարդամատն», համապատասխանում է հունական Աֆրոդիտեին և ասորական Աստարտեին: Նրան նվիրված մեհյանները գտնվում են Աշտիշատում, Արտամետում և այլուր: Քաջության աստված Վահագնի սիրուհին. Աշտիշատի մեհյանը կոչվում էր «Վահագնի սենյակ»: Աստղիկին նվիրված տոնը կոչվում էր Վարդավառ և տոնվում էր Նավասարդին: Քրիստոնեության ընդունումից հետո վերափոխվեց Հիսուսի պայծառակերպության տոնի: Աստղիկին համարել են նաև ջրի աստվածություն: Ըստ ավանդագրույցի՝ Աստղիկը գիշերները լոգանք էր ընդունում Արածանիի ջրերում: Միրատարփի հայ կտրիճները նրան մերկացած տեսնելու և նրա գեղեցկությամբ հիանալու

համար լեռան լանջին կրակ են վառել, սակայն աստվածուհին նրանցից քողարկվել է թանձր մշուշով. այստեղից էլ առաջացել է Մուշ աշխարհի անունը:

Արալեզները հայկական ոգիներ են, որոնք պաշտվել են Արա Գեղեցիկի և Շամիրամի ժամանակներում: Հայերը համարում էին, որ շնից սերված այդ ոգիները լիզում էին պատերազմում ընկած հերոսների վերքերը և կենդանացնում նրանց:

Արեգը հին հայերի մոտ արևի պաշտամունքը անձնավորող աստված է. նույնացվում է հունական Հելիոսի հետ: Նրա պաշտամունքը ունեցել է համահայկական բնույթ. հետագայում է նույնացվել է Տիրի, Միհրի, անգամ Վահագնի հետ: Հին հայկական տոմարի բոլոր ամիսների առաջին օրը կոչվում էր Արեգ. Արեգ են կոչել նաև 8-րդ ամիսը:

Գիսանեն հին հայկական աստվածություն էր, որին վերագրվել է հնդկական ծագում: Կարծիք կա, որ հովանավորել է բժշկությունը: Անվան շագումը բացատրվում է գես(ծամ, մագ) բառով. ինքը և իր տաճարի քրմերը ունեցել են երկար մազեր:

Վահագն. պահպանվել է միակ առասպելը՝ նվիրված անձրևի, ամպրոպի, ամպի, կրակի աստծուն: Վահագն անունը ստուգաբանվում է Վահ(աստված) և ագնե(կրակ) կրակի աստված: Բնության չորս տարրերն է մարմնավորում՝ երկինք-օդ, երկիր-հող, ծով- ջուր և կրակ- եղեգնիկ: Վահագնի նշանավոր տաճարը՝ Վահեվանյան կոչվող, գտնվել է Տարոնի Աշտիշատ ավանում: Նրա անվան հետ է կապվում Հարդագողի ճանապարհ

համաստեղությունը: Հաճախ համարվել է Տիգրանի որդիներից մեկը: Նույնացվել է հունական Արեսի և Հեփեստոսի հետ: Վանատուրը հայկական դիցարանի հյուրընկալության աստվածն է. հաճախ նույնացվել է Ամանորի՝ Նոր տարվա հին հայկական աստվածության հետ, որին նվիրված էին ամենաբեր նոր պտղոց տոները: Նանեն Արամագղի դուստրն է, Անահիտի և Միհրի քույրը: Իմաստության, ողջախոհության աստվածուհին, Մայրության և տան օջախի պահապանը: Նույնացվել է հունական Աթենասի հետ: Նրա մեհյանը գտնվում էր Եփրատի աջ ափին՝ Դարանաղյաց գավառի Թիլ ավանում: Ծովինարը հայոց դիցարանում ծովի, ջրի, անձրևի աստվածուհին է. ջրային տարերքի հետ կապված ոգի, Սանասարի և Բաղդասարի մայրը հայոց էպոսում: Տորք Անգեղը՝ ուժի, քաջության, արհեստների աստված:

Սանդարամետը՝ ստորգետնյա աշխարհի տիրակալը: Նույնացվում է Հադեսի և Աիդի հետ: Եվ վերջապես Տիրը՝ հայ դպրության, գրականության, գիտության և արվեստի հովանավորը: Արամագղի դպիրը: Նա երազների մեկնիչ էր, երազացույց-երազահան: Նրա մեհյանը գտնվում էր Արտաշատից ոչ հեռու՝ ճանապարհի եզրին՝ «Երամույն» կոչված վայրում: Նրա անվանմբ է կոչվել հին հայկական տոմարի Տրե ամիսը: Տիրի անունից են առաջացացել Տիրիթ, Տիրան, Տրդատ անունները:

Հեթանոս աստվածները այսօր կենսունակ են այնքանով, որքանով մեր ժողովրդի հնամենի զրույցների, ասքերի, առասպելների հերոսներն են, մեր վարքի ու պատմության կրողները, մեր հնագույն հավատալիքների մարմնավորողները: Հայ հին բանահյուսության անկրկնելի հերոսներն են, որոնցով է պայմանավորված նաև մեր ժողովրդի կենսագրությունը: Մեր երեխաները այսօր էլ կրում են նրանց անունները և նրանցով ճանաչում մեր անցյալը: Իսկ զրույցը պետք է գրի աշակերտը:

2. Կորյուն վարդապետը Մաշտոցի աշակերտն է և հայերենի առաջին ուսուցչի կենսագիրը: Կորյունի մասին կենսագրական մի քանի տեղեկություններ կան միայն, այն էլ իր իսկ գրքից, որից տեղեկանում ենք, որ նա եղել է Մաշտոցի մասնավոր աշակերտը, իր աշակերտակիցների մեջ եղել է կրտսերագույնը: Իր գրքի վերջաբանում նա հայտնում է, թե ինքն ականատես է եղել իր պատմածին, եղել է «արբանեակ»՝ այսինքն փոքրավոր գործակից և գրել է ոչ միայն իր իմացածները, այլև նշանավոր գիտակ անձերից քաղելով: Այնուհետև տեղեկանում ենք, որ նա եղել է Եզնիկ Կողբացու «ընտանեգոյն սննդակիցը», ուրեմն՝ մանկության ժամանակ նա սնվել և մեծացել է նշանավոր փիլիսոփայի հետ: Իր գրքի ուրիշ գլխից իմանում ենք, որ մի քանի «եղբայրներ» գնում են Կոստանդնուպոլիս, որոնց մեջ նաև ինքը և Ղևոնդես: Այնուհետև նա հավաստում է, որ նա իր ուսուցչի հետ եղել է տարբեր գավառներում՝ սովորեցնելու հայոց նորաստեղծ գիրը: Այսինքն զբաղվել է վարդապետությամբ՝ ուսուցչությամբ: Ուրիշ տեղեկություններ չի թողել մեր առաջին կենսագիրը: Իր մատյանը Կորյունը գրել է կաթողիկոսի տեղապահ Հովսեփ Վայոցձորեցու պատվերով 443-451 թականների միջակայքում: Մատյանի ամբողջական վերնագիրն է «Պատմութիին Վարուց եվ մահուան առն երանելիոյ սրբոյն Մաշթոցի վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորիին վարդապետե»: «Երանելի մարդու, մեր թարգմանիչ սուրբ Մաշթոց վարդապետի վարքի և մահվան պատմությունը նրա աշակերտ Կորյուն վարդապետից»: Կորյունի մատյանը հայերենով հորինված առաջին ինքնուրույն պատմական երկն է, որ «իրավամբ նվիրված է հենց այդ տառերի գյուտին և դրանց սկզբնահորը» (Մանուկ Աբեղյան): Կորյունի մատյանը հայ պատմական կյանքի նոր դարաշրջանի սկիզբն է, որի անգնահատելի արժեքը երբեք չի խամրի, քանզի այն հայ գրի ու գրականության սկզբնավորման առաջին հավաստի աղբյուրն է, հայերենի առաջին ուսուցչի իրական պատմությունը, նրա սխրանքի վավերագիրը՝ ստույգ թվականներով, աղբյուրների հիշատակմամբ: Այն ազնահատելի գանձ է հետագա բոլոր սերունդների համար և անվախճան է նրա կյանքը:

3. Այս խոսքերը Երանելի Կորյունի խոսքերն են «Վարք Մաշտոցի» մատյանը գրելու պատճառներից մեկը, քանի որ Կորյունը հավաստում է, որ ինքը նույնպես մտադրվել էր գրել «Ասքանազյան ազգի և Հայաստան աշխարհի աստվածապարզ գրի մասին, թե ե՛րբ և ո՛ր ժամանակ բաշխվեց և ինչպիսի մարդու ձեռով եղավ»: Ահա այդ ժամանակ նա հրաման-պատվեր է ստանում հայոց կաթողիկոսի տեղապահ Հովսեփ Վայոցձորեցուց, (նա տեղապահ էր նշանակվել Մաշտոցի և Սահակ Պարթևի ցանկությամբ): Հովսեփ Վայոցձորեցին Մաշտոցի աշակերտներից է. նա անգնահատելի դեր է կատարել Ավարայրի ճակատամարտի ժամանակ: Ճակատամարտից հետո գերեվարվում և Պարսկաստան է տարվում, այնուհետև նահատակվում հանուն քրիստոնեական հավատի: Սրբադասվում է Ավարայրի նահատակների հետ: Կորյունը հիացմունքով ու ակնածանքով է խոսում Հովսեփ Վայոցձորեցու մասին՝ անվանելով նրան «պատվական», «գլխավոր ժողովոյն»: Հովսեփ Վայոցձորեցու մասին հիշատակում է նաև Փարպեցին անվանելով «սուրբն Յովսեփ»:

4. Հայրենը՝ որպես բանաստեղծական տեսակ ձևավորվել է 10-12 –րդ դարերից սկսած(Նարեկացի, Ֆրիկ, Շնորհալի, Երզնկացի և այլք), սակայն իր ծաղկմանն է հասել 15-16-րդ դարերում: Մեզ են հասել շուրջ 500 հայրեններ, որոնց գերակշիռ մասը վերագրվում է 16-րդ դարի բանաստեղծ Նահապետ Քուչակին: Քուչակը ապրել է 100 տարի(15-րդ դարավերջ-1592): Ծնվել և ապրել է Վանի Խառակոնիս գյուղում: Փաստական վկայություն կա նրա գերեզմանի մասին. նա թաղված է Խառակոնիսի Սուրբ Թեոդորոս եկեղեցու բակում և տապանաքարին գրված է. «Սա արեւ Քուչակ թվ ՌԽԱ ձղ Քս» -1592: Կենսագրական տեղեկությունները չափազանց ժլատ են. թո՞ք Քուչակի ձեռագիր հիշատակարանում պահպանվել է հետևյալը. «Յիշեցէք զՔուչակն և միւս կողակիցն Թանգիսաթունն: Դարձեալ յիշեցէք Նահապետ վարպետն, որ եւ մեծ պապն իւր, որ մականունն Աշըղ Քուչակ ասի»: Իսկ Քուչակը գրել է.

Ես Քուչակն եմ վանեցի  
Ի գեղէն Խառակոնիսայ,  
Լցեր եմ հարիւր տարին,  
Էլ չի գար մտքիկս ի վերայ...

Քուչակը սիրված է եղել ամենուր, նրա համբավը հասել է անգամ սուլթանին, որի կնոջը բուժել է իր երգերով և ի տրիտուր նվեր ստացել յոթ եկեղեցի (իհարկէ սուլթանի կամքով նաև յոթ մզկիթ), որ կառուցել է սուլթանը: Նրա գերեզմանը սրբատեղի է եղել, այնտեղ են երդվել սիրահարները:

Հայրենների թեմատիկան խիստ սահմանափակ է. սիրային, պանդխտության, խոհափիլիսոփայական:

Քուչակի համար սերը կեցության հիմքն է, ապրելու նպատակը. «Երբ սերն ի յաշխարհս», « Ես աչք ու դու՝ լոյս», « Ո՞ր էիր, ուսկի՞ց եկար» և այլն, պանդխտության՝ «Ուսկա կու գնամ», «Աղվոր, իմ հազար աղվոր», «Եկան ու ասին ինձ»...

Խոհափիլիսոփայական՝ «Ձեր գալո՞ւ է բարի», «Աշխարհս է ի ծով նման», «Կացինն ի մորին րնկեր» ...

Աշակերտը կարող է գրել իր իմացած ցանկացած հայրեն և վերլուծել:

#### Գնահատման չափանիշները /9-րդ դասարան/

##### 1-ին հարց

- 1 ենթահարց՝ 2 մ
- 2 ենթահարց՝ 1 մ.
- 3 ենթահարց՝ 2 մ.

##### 2-րդ հարց

- 1-5 ենթահարցերը՝ 1-ական մ.

##### 3-րդ հարց

- 1 ենթահարց՝ 1 մ.
- 2 ենթահարց՝ 1 մ.
- 3 ենթահարց՝ 2 մ.

##### 4-րդ հարց

- 1 ենթահարց՝ 1 մ.
- 2 ենթահարց՝ 2 մ.
- 3 ենթահարց՝ 2 մ.